



Ա Ր Ա Վ Ի Ֆ Ա Տ Տ Տ Տ Տ

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՒԹԻԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱԶԴԱՑԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Թ Յ Ի Ւ Թ Ե Տ Ա Ր Ի Ւ

Հ Ե Մ Վ Ա Բ Ե Ր Ո Ւ Ր Վ

Մ Ա Ր Տ 1895 թ.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Ա Կ Ա Ն Ա Ս Պ Ա Ր Ե Զ Բ Ը

Ն թ է կեամք նոգով, ընդ նոց-
տոյն եւ միաբանեսցնք. եւ մի'
լիցով սնապարծ՝ միմնանց
ծայն տալով եւ ընդ միմնան
նախանձելով
Գաղ. Ե. 25—26:



ուրբ Գյոքի այս խօսքե-
րը բոլոր քրիստոնեանե-
րի համար են ասած,
սակայն մենք ի նկատ
կառնենք միայն հոգեւո-
րական դասակարգին,
ընդունելով որ այստեղ
արտայայտուած սկզբունքին ամենից առաջ նա

պէտք է համաձայն դնայ՝ եթէ արժանի է իւր
անուան: Հոգեւորականութեան խնդիրը ամե-
նակարևոր և կենդանի խնդիրներից մէկն է
մեզ համար և կմնայ գեռ երկար ժամանակ. ի-
րականութեան մէջ նա երբէք լուծումն չի
գտնի, մինչև որ մենք տեսականապէս չըրոշենք
այն գաղափարը, այն կատարելատիպը, որին
հասնել պէտք է ձգտէ արժանաւոր հոգեւորա-
կանը. իսկ եթէ գաղափարը կայ, որոշ ամենքի
աչքի առաջ նկարուած՝ նա իւր համար ճա-
նապարհ կրանայ, մարդիկ կգտնէ: Այդ գա-
ղափարը մութն է, զեռ և ամենատարօրինակ
կարծիքների առարկայ՝ զիսաւորապէս այն
պատճառով, որ մենք նորան որոշելու հա-
մար չափը դրսից ենք բերում: Փոխանակ նոյն
իսկ հոգեւոր կոչման մէջ որոնելու:

Ամենից ընդհանուր շափն այն սովորական գարձած պահանջն է, թէ հոգեորականը ուսում ստացած պէտք է լինի. շատ իրաւացի պահանջ բայց անորոշ և միանդամայն խիստ վտանգաւոր թիւրիմացութիւնների առիթ։ Աթէ այսօր մեզանում կարելի է համարուում հոգեորական լինել առանց ամենատարրական ծանօթութիւններն ունենալու այդ կոչման դրած պարտաւորութիւնների մասին, քրիստոնէական կրօնի և ազգային եկեղեցու գաւանութեան մասին. եթէ կան մարդիկ, որ պատրաստ են արժանաւոր հոգեորական համարել փառարանել մշկին՝ միայն նորա համար, որ նա ուսում է, առել ուշադրութիւն չգարձնելով նորա բարոյական և հոգեորական կեանքի զանցառութիւնների վերայ, այս համոզած մինչև խիկ, թէ նա հոգւով քրիստոնեայ լինել չէր կարող, թէ նա իւր ձեռնազրութեան ժամանակ մրտաքում ծիծաղում էր իւր զինին կարդացած վճիռների վերայ, թէ նա ուրեմն միայն ձեկի համար էր վերարկու հաղնում՝ այդ արդէն անհեթեթ հետեւանքն է ամենից առաջ այն սխալ համոզման, թէ ամեն տեսակ ուսում ընդունակ է կացուցանում մարդոց հոգեւոր կոչման համար։

Ամեն ուսում իրեն յատուկ աշխարհահայցողութիւնն ունի, խիկ մեծագոյն մասն այն դպրոցների, ուր մեր երիդասարդները կրթութիւն են ստանում՝ այնպիսի աշխարհահայցողութիւն է տալիս, որ հոգեորականութեան գաղափարին գծուար համակերպել կարող է։ Քրիստոնէական եկեղեցին այսօր ամեն տեղ կուիւ է վարում խիստ զօրեղ հակառակորդների դէմ, զարմանալի չէ, որ մեր մէջ էլ եկեղեցին իւր թշնամիները, եկեղեցական սկզբունքըն իւր հակառակորդներն ունենայ. բայց զարմանալի կլինի արդարեւ, եթէ, մենք ազնիւ արժանաւոր գրքիներ համարենք նոցաւ որ եկեղեցական սքեմ են առնում հակաեկեղեցական ձգտումներով, որ հոգեորական անուան տակ հոգեորական սկզբունքին հակառակ են գործում։ Մի հասարակութիւն, որ այսպէս վարուելու ընդունակ է, որ քաջալերումէ հոգե-

րականութեան մի նշոյլ անդամ ցոյց չտուող հոգեորականների՝ իրաւունք էլ չունի պահանջելու, որ արժանաւոր հոգեորականներ լինին։

Որպէս զի լինին նոքա, հարկաւոր է որ նախապատրաստուին՝ հոգեւոր ուսում հոգեւոր կրթութիւն ստանան. և որ զիսաւորն է, որպէս զի մենք հոգեորականներս այդ անունը կրելու արժանի լինինք, որպէս զի կարողանանք ասել, թէ հոգեւոր կոչումն ունինք, հոգւով ենք ապրում հոգւոյ սկզբունքի ներքոյ՝ հարկաւոր է նաև որ այդ սկզբունքին համաձայն ընթանանք. հոգւոյ հետ համերաշխ աշխարհահայցողութիւն և գործ ունենանք։

Այս է պահանջում առաքեալը, և նա ցոյց է տալիս, թէ որն է հոգւոյ աշխարհահայեցողութիւնը, որն է հոգւոյ գործը. հարկաւոր է նորանից սովորել առաքելական աղբիւրից առնել մեր առաջնորդող գաղափարը և ոչ թէ քմահաճ տեսութիւնների հետեւել։ Այսպիսով միայն մենք մի համերաշխ եղանակացութեան գալ կարող ենք։ Խրաքանչիւր հաստատութիւն իւր գաղափարը ի ը մէջն ունի, իրեն կառավարող հոգին, և այդ հոգին է միայն որ միացնումէ, մարմինը բաժանումն է ձգում։ Ուստի և «մէ՛ լիցուք մնապարձք՝ միմիանց ձայն տալով և ընդ միմեանս նախանձելով» ...

«Պա թէ զմիմեանս խածատիցէք և ուսիցէք, զզոյշ լերուք՝ գուցէ ի միմեանց սատակիցէք։ Այս, մաշ և անկումն է սպառնում մեզ, եթէ փոխանակ բոլորս աշխատելու, որ մեր Ա. Եկեղեցին կառավարող ներքին հոգւոյ համաձայն ընթանանք՝ այդ հոգւով համաձայն ու միաբան նաև միմեանց հետ մեր մնութիւ պարծանքը մէջ տեղ կդնենք, կզրուենք ու կզրուուինք միմեանց դէմ, միմեանց կնախանձենք՝ կաշխատենք մարդկան հանջ լինել և ոչ Աստուծոյ։ Մի խարիք, Աստուած ոչ արհամարհի, զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն, և որ սերմանէ ի հոգին՝ ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանս յաւիտենից։